ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Վարդանյան ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/37 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
16	1. ԲՈՒԺԿԵՏ 1.1 Սեղան բժշկական՝ չափերը՝ 1200x600x760մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ 18մմ հաստությամբ, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանի առջևը փակվում է 18մմ հաստությամբ ՓՏՍ-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164x450x600մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանում է աշխատանքային հարթության եզրին (տակից) և կողապատերի (ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը կշրջափակվեն 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է պտուտակների միջոցով ամրացվի ոտիկներ՝ 5-6մմ բարձրությամբ: Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով: Սեղանը կունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափերը՝ 410x460x690մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 130-150; 130-150; 250-350մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, գզրոցի հետնապատը նույնպես պետք է լինի նույն ՓՏՍ-ից, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով սալյասկա (գնդիկավոր տեսակի ամերիկանկա) առնվազն 35մմ լայնությամբ: Սեղանը,

	կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ ՓՏՍ-ի, բնափայտի երանգներով ոչ շատ մուգ գույնի: Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Սեղանի ոտքերին պտուտակնրով պետք է ամրանան 4 պլաստիկե բաց գույնի խցաններ՝ 5-6մմ հաստությամբ, որը կապահովի հատակից առնվազն 4 -6 մմ բարձրություն: հատ 1 1.2 Գործիքային սեղան՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N1239-Ն որոշման, ՀՀ Առողջապահության նախարարության N867 հրամանի պահանջներին համապատասխան: Սեղանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է պատրաստված լինեն մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0)մմ՝ զոդման եղանակով, անկյունների միացումը կատարվում է 45 աստիճան հատվածքով,կմախքի արտաքին չափերը առնվազն՝ 710x515x870 մմ(ԵxLxԲ): Սեղանը ունի երկաթյա մեկ շարահարթակ՝ գետնից 500մմ բարձրության վրա: Սեղանածածկը և շարահարթակը երեսպատված են 1.1-1.5մմ հաստությամբ 18/10 չափսի չժանգոտվող պողպատից, սեղանածածկի երեք կողմերը պետք է ծալված լինեն դեպի ներքև 30մմ, իսկ հետևի կողմը կլորացված եզրով՝ դեպի վերև 70մմ: Զոդման կարանները պետք է լինեն մշակված և ողորկ: Սեղանի կմախքին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը, որոնց եզրերը պետք է խցանված լինեն 8մմ հաստությամբ պլաստիկե խցաններով: Սեղանի ոտքերին տակից ամրանում են հենահարթակով բարձրորակ, անձայն և ամուր անվակներ, որոնցից երկուսը պետք է ունենան արգելակման համակարգ: Կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է լինի փոշեներկված արծաթագույն ջրակայուն որակյալ ներկով: հատ 1 1.3 Ապակե պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N1239-Ն որոշման, ՀՀ Առողջապահության նախարարության N867 հրամանի պահանջներին համապատասխան: Բժշկական պարագաների պահարանի արտաքին նվազագույն չափսերն են՝ 600x450x900 մ (LxԽxԲ): Պահարանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է պատրաստված լինեն մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0) մմ՝ զոդման եղանակով, անկյունների միացումը կատարվում է 45 աստիճան հատվածքով,իսկ ծածկը և պատերը 1.0-1.2 մմ հաստության մետաղական թիթեղից: Պահարանը ամբողջ բարձրությամբ բաժանված է երեք հավասար, թրծած ապակուց շարահարթակների և ունի բանալիով փակվող երկու ապակե դուռ, որոնցից յուրաքանչյուրը ամրանում է երեքական ծխնիներով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված և ողորկ: Պահարանի կմախքին զոդման միջոցով ամրացվում են 200 մմ բարձրությամբ մետաղական ոտքերը, որոնց եզրերը պետք է խցանված լինեն 8 մմ հաստությամբ պլաստիկե խցաններով: Կմախքը, ոտքերը, ծածկն ու պատերը ամբողջությամբ պետք է լինեն փոշեներկված արծաթափայլ կամ սպիտակ գույնի ջրակայուն որակյալ ներկով: հատ 1 1.4 Էլեկտրոնային կշեռք, պատվանդանի չափերը՝ (450x550)մմ, կշեռքի քաշը՝ 15-25 կգ: Կշռում է 0-ից-150կգ: Ուղղանկյունաձև

	հարթակով, կանգնակով, ունի ապակյա էկրան՝ թվային ցուցիչով: Նմուշը /նկար-1/ կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: հատ 1 1.5 Հասակաչափ՝ ինքնակպչուն հասակաչափը պատրաստված է էկոլոգիապես մաքուր հումքից՝ բնական մանրաթելերից բաղկացած ֆլիզիլինի հիմքով վինիլային պաստառից: Այն հեշտությամբ փակցվում է պատի հարթ մակերեսին: Հանելիս, պոկելիս չի պատռվում և պատին հետքեր չի թողնում: Նմուշը /նկար-2/ կցվում է: հատ 1 1.6 Տեսողության ստուգման աղյուսակ (Օրլովայի կամ Գոլովին-Սիվցևի աղյուսակ)՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1239-Ն որոշման, ՀՀ Առողջապահության նախարարության N867 հրամանի պահանջներին համապատասխան: Այս աղյուսակը պարունակում է տպագիր տառերի տողեր (ընդհանուր 12 տող), ընդորում, տառերի չափը վերևից ներքև տողից տող փոքրանում է: Յուրաքանչյուր տողի ձախ կողմում նշված է այն D հեռավորությունը (մետրերով), որից նորմալ տեսողությունունեցող անձը պետք է տեսնի դրանք (վերևի շարքի համար՝ 50.0 մետր, ներքևի համար՝ 2,5 մ): Յուրաքանչյուր տողի աջ կողմում նշված է V մեծությունը (պայմանական միավորներով). դա 5 մետր հեռավորությունից տառերը կարդալուտեսողության սրությունն է (0,1, եթե աչքը տեսնում է միայն վերևի շարքը, 2,0, եթե տեսնում է ներքևի շարքը): Տեսողությունը համարվում է նորմալ (1,0), երբ մարդը յուրաքանչյուր աչքով 5 մետր հեռավորությունից տեսնում է տասներորդ տողը: Տառերի չափը որոշակի տողում հաշվարկելու համար (մոտ 1 միլիմետր սխալիդեպքում) անհրաժեշտ է, ըստ -ի մեծության, բաժանել 7 միլիմետր սանդղակով: Այսպես, վերևի տողում տառերի չափը կլինի 70 միլիմետր (V = 0.1), իսկ ներքևում՝ 3,5 միլիմետր (V = 2): Մեկ այլ հեռավորությունից տեսողության սրության ուսումնասիրության ժամանակ (0,1-ից պակաս, եթե մարդը 5 մետրից չի ճանաչում վերևի շարքի տառերը) հետազոտվողանձին մոտեցնում են աղյուսակին և յուրաքանչյուր 0,5 մետրից հետո հարցնում, մինչևնա ճիշտ կանվանի վերևի շարքի տառերը: Տեսողության սրության չափը հաշվում են հետևյալ բանաձևով. V = d/D, որտեղV՝ տեսողության սրություն,՝ հեռավորությունը, որից կատարվում է հետազոտությունը,՝ հեռավորությունը, որի դեպքում նորմալ աչքը տեսնում է այս շարքը: Տպագրությունը պետք է կատարված լինի որակյալ նյութերով՝ ստուգման ժամանակ աչքի համար լրացուցիչ լարվածություն չստեղծելու նպատակով: Օգտագործվող նյութերը պետք է լինեն բարձրորակ և մաշակայուն: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Նմուշը

	/նկարը-3/ կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: հատ 1 1.7 Բժշկական թախտեր՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N1239-Ն որոշման, ՀՀ Առողջապահության նախարարության N 867 հրամանի պահանջներին համապատասխան: Բժշկական թախտի չափսերն են՝ 180x60x60սմ: Ընդհանուր շրջանակը պատրաստված է ամուր մետաղական պրոֆիլից և փոշեներկված է մաշվածության դեմ դիմացկուն ներկանյութով: Թախտի արտաքին փափուկ երեսը ծածկված է բարձրորակ էկոլոգիապես մաքուր արհեստական կաշվից, որը ապահովում է հարմարավետությունը: Թախտի գլխի հատվածի բարձրությունը կառավարվող է:Նմուշը /նկար-4/ կցվում է: հատ 1

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Варданян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/37 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
16	